



Չարմանագան-2017 Արեւմտահայերէնի ամառնային ճամբար

Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքը իր ամառնային «Չարմանագան» առաջին ճամբարը կազմակերպեց 2017 Յուլիս 17-էն Օգոստոս 11, Ֆրանսայի Պուրպուկ համայնքին մէջ: Դաստիարակչական այս ծրագիրը մաս կը կազմէ Հայկական համայնքներու բաժանմունքին կողմէ նախատեսուած՝ արեւմտահայերէնի զարգացման եւ տարածման յայտագրին: Ծամբարը կազմակերպուեցաւ համագործակցութեամբ Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու հիմնարկին (INALCO) եւ ղեկավարութեան ներքեւ «Հազար ու մէկ աշխարհներ» ընկերակցութեան, որ Ֆրանսայի Երիտասարդութեան եւ մարզանքի նախարարութեան կողմէ վաւերացուած կազմակերպութիւն մըն է:

«Չարմանագան»-ը կը բաղկանար զիրար լրացնող երկու հանգամանքներէ: Առաջինը՝ ամառնային այս ճամբարը 10-էն 15 տարեկան երախաներու համար՝ արեւմտահայերէնի մէջ «թաթխուել»-ու վայր մըն էր: Այս քսանհինգ օրերու ընթացքին ստեղծուեցաւ խաղերով՝ նորարար աշխարհ մը, ուր տղաքը կ'ապրէին ու կը սորվէին բացառաբար ու շարունակաբար արեւմտահայերէնի գործածութեամբ: Եւ երկրորդ՝ «Չարմանագան»-ը կ'առաջարկէր INALCO-ի կողմէ վաւերացուած համալսարանական վարժընթաց մը՝ արեւմտահայերէնի ուսուցիչներու կամ ապագայ ուսուցիչներու համար, որոնք եկեր էին համայն Սփիւռքէն:

Ծամբարին կը մասնակցէին 40 երախաներ, 20 հսկիչներ, որոնք նաեւ տղոց հետ զանազան գործունեութիւններ կը վարէին (animateurs), ինչպէս նաեւ իրենց պատրաստութեան շրջանը բոլորող 15 ուսուցիչներ եւ ուսուցիչ պատրաստող 6 դասախօսներ, բոլորն ալ եկած՝ 10 տարբեր երկիրներէ: Երախաներուն համար իւրաքանչիւր օրը հանդիսացաւ նոր արկածախնդրութիւն մը: Անոնք մասնակցեցան իրենց բառամթերքը եւ երեւակայութիւնը ընդարձակող աշխատանոցներու, սորվեցան եւ ստեղծագործեցին երաժշտութիւններ ու պարեր, հետազօտեցին բնութիւնը՝ նկարահանող գործիքի մը ոսպնեակէն, գծեցին անհատական գծագրութիւններ, որոնք քով-քովի դրուելով կազմեցին մեծ որմնակարներ, պատրաստեցին կերակուրներ ու ծաղեր: Գործադրեցին նաեւ ձայնասփիւռի առօրեայ յայտագրեր եւ մասնակցեցան գրավարժութեան, թատրոնի եւ ֆիլմի նկարահանման աշխատանոցներու: Այս աշխատանոցներուն մէջ իրագործուող ծրագրերը, —որոնց բոլորն ալ կ'ընթանային հայերէնով,— այնուհետեւ իրիկունը՝ հսկումներու ընթացքին կը ցուցադրուէին միւս բոլոր մասնակիցներուն: Այս միջավայրը, որ կ'ընձեռնէր գործունեութիւններու լայն շրջանակ մը եւ կը մնար կեդրոնացած՝ երախաներուն վրայ, նպաստեց բոլոր մասնակիցներու հայերէնի նկատմամբ յղացողական մօտեցումին:



«Չարմանագան» ճամբարը կը հանդիսանար կեդրոնական բաղադրիչը INALCO-ի կողմէ առաջարկուող եւ «Սփիւռքի մէջ արեւմտահայերէն դասաւանդել» տիտղոսը կրող՝ ուսուցիչներու պատրաստութեան յայտագրին: Դասախօսութիւններու, ընթերցանութեան եւ գրավարժութեան աշխատանոցներու եւ մանաւանդ երախաներուն հետ ուղղակի շփումով՝ գործնական դաստիարակութեան միջոցով մանկավարժական նորարար մօտեցումներ եւ ճանաչում գտած գործելաձեւեր աւանդուեցան վարժընթացի մասնակիցներուն: Վարժընթացը, որ հիմնուած է երկրորդ լեզուի մը իւրացման մեթոտին եւ քննադատ մտածողութիւնը խթանող մեթոտաբանութեան վրայ, պիտի շարունակուի համալսարանական եւ դպրոցական տարեշրջանի ընթացքին՝ վարժընթացի մասնակիցներէն պահանջուող պարտականութիւններով, որոնք աղերս պիտի ունենան իրենց արդէն սորվածներուն հետ: Ամառնային վարժընթացի ընթացքին, այդ նոյն մասնակիցները հետեւեցան իրենց համար նոր լեզուի մը (իմա՝ փորթուկալերէնի) մէջ «թաթխուել»-ու յայտագրին, այդպէսով՝ ձեռք ձգելով լեզու մը իւրացնելու համար՝ որքան դաստիարակին, նոյնքան ալ աշակերտին դիմագրաւած մարտահրաւերներու փորձառութիւնը:

Բոլորն ալ առիթն ունեցան նաեւ իւրաքանչիւր շաբաթ մասնակցելու շրջանին մէջ կատարուող պտոյտներուն: Այսպէս, անոնք այցելեցին Պես Սէն Թ'Անասթեզ միջնադարեան գիւղը, մասնակցեցան Շոտըֆուռի հովիտի պտոյտին, Մոն Տորի անտառային շրջապատին մէջ ճիւղէ-ճիւղ զբօսանքներուն (acrobranche), Նստեցան Փիւի տը Սանսիի ճոպանուղին, այցելեցին Սիւռոյի միջնադարեան դղեակը, լողացին Շամպոնի լիճին մէջ, նաեւ մասնակցեցան բազմաթիւ այլ պտոյտներու Պուրպուլ համայնքին մէջ, ուր տեղի կ'ունենար ճամբարը:

«Չարմանագան» ճամբարը յղացած է Կիւլպէնկեան Զիմնարկութեան Զայկական համայնքներու բաժանմունքի՝ Արեւմտահայերէնի զարգացման եւ տարածման ծրագրերու պատասխանատու Անի Կարմիրեանը: Լաւագոյնը պիտի ըլլայ խօսքը տալ իրեն. ««Չարմանագան»-ի խումբին համար՝ Սփիւռքի չորս կողմերէն ժամանած՝ այնքան տաղանդաւոր մարդոց հետ աշխատիլը եղաւ հոյակապ փորձառութիւն մը: Նաեւ շատ հաճելի էր հաստատել ոչ միայն լեզուական, այլեւ՝ բոլոր մասնակիցներու զգացական, ֆիզիքական եւ ընկերային յառաջընթացը: Զուսկ, պէտք է ըսել, որ լեզուին շուրջ՝ երախաներուն մէջ ծիլ արձակած խանդավառութիւնը իսկապէս վարակիչ եղաւ»:

Յառաջիկայ Նոյեմբերին պիտի հրապարակենք ճամբարի մասնակիցներէն տպաւորութիւններ, ինչպէս նաեւ տեսանիւթեր: